

ՄԵՐ ԼԵԶՈՒԻ ՏԱՐՐԵՐԸ

(Հանրամատչելի յօդուած)

Վ.ՏԱԿ ԺՈՂՈՎԱՃՈՒԻ Բ. մասի մէջ, էջ 229—235, մի փոքր յօդուած կար՝ «Հայոց ծագումը և նախապատմական շրջանը» վերնագրով, և խիստ մատչելի ու ժողովրդական ոճով: Նոյն յօդուածի գրեթէ շարունակութիւնը կարելի է համարել յաջորդը, որի նպատակն է ցուցնել թէ ինչ տարբերից կազմուած է հայերէն լեզուն, ինչքան արմատ ունի, ինչ ազդեցութիւն են արել մեր վրայ օտար լեզուները, և թէ ինչքան բառ փոխ ենք առել նրանցից. մի խօսքով հայ լեզուաբանութեան ամփոփումը:

Երբ ձեռք առնենք վենետիկի Առձեռն բառարանը, — որ բառերի շատութեան կողմից ամենից աւելի ընդարձակին է և նոյն իսկ Մեծ Հայկազեան Բառարանից հինգ հազար բառ աւելի ունի, — երբ ձեռք առնենք այդ բառարանը և դուքս հանենք բարդ և ածանցական բառերը, կը տեսնենք թէ մնում է 6500 արմատական բառ, որ ներկայացնում է Ե-ից մինչև ծ-Ե դարի հայ մատենագրութեան ամբողջ հարստութիւնը:

Բայց այս չեր մեր լեզուի նախնական վիճակը:

Մենք տեսանք թէ մեր նախնի երկիրը Կիլիկիան էր, որտեղ Հաթեան անունն ունէինք և խօսում էինք Հաթեարէն: Այս լեզուն լիակատար կերպով ծանօթ չէ այժմ. կան միայն բաւական թուով արձանադրութիւններ, որոնք վերլուծել աշխատելով Պր. Ենսէն դերմանացին, մի փոքրիկ դաշտավար կարողացաւ հանել Հաթեան լեզուի մասին:

Երբ Հաթերն եկան Հայաստան, շարունակեցին խօսել Հաթերէն լեզուն, որ ժամանակի ընթացքում հետզետէ փոխուելով՝ վերջապէս առառ զբարար հայերէնի կերպարանքը:

Ա. Ըստ այսմ մեր լեզուի առաջին և էական տարրը կազմում են Հաթեան լեզուից յառաջացած բառերը որոնք

նախկին Հնդեւրոպական նախալեզուից ժառանգութիւն են մնացել և կոչուում են բնիկ հայերէն բառեր:

1. Եզուարանների աշխատութեամբ մինչև այժմ ապացուցուել է թէ, զբարարի 6500 արմատներից 300-ը կամ մի քիչ աւելին բնիկ հայերէն բառեր են: Սոցա թիւը գեռ 1883 թուականին 250-ի չեր հասնում և յուսալի է թէ ապագայում կարող է դեռ աւելի բարձրանալ:

Բ. Հաթեան լեզուից զուրս եղած բոլոր բառերը մեզ վրայ տիրող կամ մեզ հետ հազորդակցող ազգերից են անցած և կոչուում են օտար կամ փոխառեալ բառեր:

1. Ծանօթ փոխառեալ բառերի շարքում առաջին կարգն են բռնում Իրանեան լեզուախմբից անցած բառերը: Իրանեան անունով են կոչուում Իրանի մէջ խօսուած լեզուները, այսպէս՝ առաջին Զանդկերէն լեզուն, որ երեսում է թէ խօսուում էր Մարաստանում, երկրորդ՝ Հին Պարսկերէնը՝ որ Պարսիկների հնագոյն լեզուն էր և խօսուում էր մինչև ն. Ք. երրորդ դարը, երրորդ՝ Պահլաւերէնը, որ սկսում է ն. Ք. երրորդ դարից և հասնում է մինչև Յ. Ք. եօթներորդ դարը, բաժանուելով երկու գլխաւոր շրջանի: արշակունեան և սասանեան պահլաւերէն: չորրորդ՝ պարսկերէնը՝ որ Յ. Պարից է սկսում խօսուել:

Հայերի յարաբերութիւնը Իրանեանների հետ սկսում է ն. Ք. Զ. դարում, երբ Կիաքսարի ձեռքով անցնում են մարտական և սրանից քիչ յետոյ էլ պարսկական տիրապետութեան տակ: Սկսած այդ թուից մինչև այժմ մենք անդադար անմիջական յարաբերութեան մէջ ենք եղել նրանց հետ, միշտ իբր հարեւան, մի ժամանակ իբր կրօնակից և շատ ժամանակ էլ իբր նրանց հաղատակ ժողովուրդ: Այդ յարաբերութեանց արդիւնքն է եղել որ 750 բառեր անցել են մեր լեզուին:

2. Փոխառեալ հայերէն բառերի շարքում կարեռութեան կողմից երկրորդ տեղն են բռնում ասորերէնից և ասորեստաններէնից առնուած բառերը: սրանք էլ կարող ենք բաժնել երկու շրջանի: առաջինը Հաթեան շրջանը՝ երբ մենք իբր դրացի՝ ուղղակի յարաբերութեան մէջ էինք ասու-

ըիների և պատերազմների պատճառաւ կամ իրը նուաճուած ժողովուրդ էլ ասորեստանցիների հետ. երկրորդ Եղեսիոյ թագաւորութեան շրջանը՝ երբ Հայերն ու Ասորիները քաղաքականապէս այնքան մօտիկցած ու բարեկամացած էին, որ օտարները շատ անդամ մեզ երկուսիս իրը մի ժողովուրդ են հաշուել. իսկ երբ երկուսս էլ քրիստոնէութիւն ենք ընդունում, յարաբերութիւնները աւելի են շատանում. Հայերից գնում են Եղեսիա ուսում սովորելու և դառնում են Հայաստան. Յ. Գիրքը նախ թարգմանուում է ասորերէնից: Բոլոր այս յարաբերութիւնները՝ որ Հեագոյն ժամանակներից սկսելով տեսում են մինչեւ Եղարի կեսը, տուել են մեզ 140 փոխառեալ բառեր. այս թուից մի մասը ասորեստաներէնից է և մի մասը ասորերէնից. ասորերէնից վերցրած բառերը մեծամասնութիւն են կազմում. քրիստոնէական գաղափարի և պաշտամունքի վերաբերեալ բոլոր բառերը յայտնապէս ասորի են և ոչ ասորեստանցի:

3. Թուի կողմից երկրորդ, բայց կարեորութեան տեսակետից երրորդ տեղն են բունում յունարէնից վերցրած բառերը: Մակեդոնական շրջանից, մանաւանդ Տիգրան Բ.-ի օրով Հայերը մօտենում են յոյներին: Դ. դարում քրիստոնէութիւն ընդունելով, սրտակից յարաբերութիւն սկսում ենք ունենալ նրանց հետ. Հայերի համար՝ սկսած Ե. դարից՝ գիտութեան հայրենիքն էր Կոստանդնուպօլիսը, ուր գնում էին մերոնք գիտութիւն և լեզու սովորելու. յոյն մատենագրութեան ազգեցութիւնը մեր վերայ անհուն է. աւելի յետոյ էլ Հայաստանը մօնելով Բիւզանդեան կայսրութեան տակ, քաղաքականապէս էլ միացած ենք լինում: Յունական յարաբերութիւնները տեսում են շարունակ մինչեւ Ժ. դարը. որոնց արդիւնք է լինում 550 բառերի փոխառութիւնը: Բայց պէտք է նկատել թէ այս բառերից քչերը միայն անցել են ժողովրդական լեզուին. մեծ մասը մնում է գրեւը մէջ, իրը գրական փոխառութիւն:

4. Հայերը Զ. դարում մտնում են արաբական տիրապետութեան տակ, բիւզանդական մի քանի ընդմիջումներից յետոյ կանգնում է, Բագրատունեան իշխանութիւնը՝ արտ-

բական գերիշխանութեամբ. Յուրինեան հարստութեան ժամանակ շատ ենք շօշափուում եղիպտական Արարների հետ, որոնցից նուածուում ենք վերջապէս. այս յարաբերութեամբ էլ մել են անցնում 100 տրաբական բառեր: Ժ.Ա.—Ժ.Պ դարբերում և աւելի յետոյ Հայերը արաբերէնից մի խումբ բժշկական և աստղաբաշխական գրուածներ են թարգմանում: այդ թարգմանութեանց մէջ գտնում ենք շատ ու շատ զուտ արաբերէն բառեր. բայց որովհետեւ սրանք չեն անցել բառաբանների մէջ, ուստի մենք էլ չենք հաշուում:

5. ԺԲ. դարում սկսում են Սելջուքեան Յուրըերի նուածումները Հայաստանում. Յուրըերը հետզետէ յառաջանալով վերջապէս միահեծան տէր են դառնում մեր երկրին. այդ ժամանակից սկսած թուրք-Թաթարական լեզուի բառեր և ձեւեր նոյնպէս մտնում են մեր լեզուի մէջ. նրանց թիւը թէեւ այժմեան ժողովրդական ռամիկ լեզուի մէջ հազարներով է հաշուում (Պօլսի բարբառում կան 4200 տաճկերէն բառեր), սակայն նոցանից հազիւ 30—40 հատը միայն անցել է բառաբանի մէջ:

6. Նոյն միջոցին, Կիլիկեան իշխանութեան ժամանակ, Հայերը յարաբերութիւններ ունենալով Եւրոպայի լատին իշխանների հետ, սոցանից էլ բառեր սկսում են փոխ առնուել. ժամանակակից դրականութեան մէջ Եւրոպական բառերի թիւը մեծանում է, սակայն Առձեռն բառարանում հազիւ յիսուն բառ լինի, մեծ մասով հին ֆրանսերէնից փոխ առնուած:

Ամփոփենք այժմ այս բոլորը, հետեւեալ աղիւսակի մէջ.

Ա. Բնիկ հայ բառեր 300

Բ. Փոխառեալ բառեր

1. Իրաննեան բառեր	750
2. Ասորերէն բառեր	140
3. Յունարէն բառեր	550
4. Արաբերէն բառեր	100
5. Յուրըերէն բառեր	40
6. Եւրոպական բառեր	50
	<hr/>
	Գումար
	1630
	<hr/>
	1930

որ հանելով 6500-ից, մնում է դեռ 4570 չմեկնուած բառ:

Ի՞նչ պիտի անենք այս 4570 բառերը. անշուշտ սոքա էլ իրանց մեկնութիւնը պիտի ունենան. ապագայում դեռ սոցանից մի մասը պիտի մեկնուի իրր բնիկ հայ բառ և մի ուրիշ մասն էլ փոխառութիւն ասորականից կամ սպարսկականից: Խսկ մնացեալլը:

Հնութիւնը իւր ամբողջ գաղտնիքները չէ աւանդել զիտութեան. յատկապէս հայ լեզուարանութեան գործածելու միջոցների մէջ մի մեծ թերի մաս կայ. խիստ քիչ բան է յայտնի Կապագովկերէնից, Փոխւգերէնից, Խալդիերէնից և Փոքր-Ասիական այլ լեզուներից. և սակայն սրանք շատ մեծ դեր ունին մեր լեզուի կազմութեան մէջ. այդ ժողովուրդների հետ ամենօրեայ և խիստ սերտ օարաբերութիւնները հաղարաւոր փոխառութիւններ տուած պիտի լինին մեզ, որոնց վերայ լեզուարանութիւնը ոչինչ չէ ասել և չէ էլ կարող ասել, մինչեւ որ այդ լեզուները չյայտնուին:

Հայերէնը ի հարկէ Կովկասեան լեզուներից էլ բառեր առած պիտի լինի. իրօք էլ մեր լեզուն սոցա հետ համեմատելով դանում ենք 900 բառեր, որոնք թէ մեզ և թէ նրանց հասարակաց են. այս 900 բառերի մէջ դժնուում են շատեր, որոնք հայերէնի մէջ արդէն մեկնութիւն ունին, այսինքն կամ բնիկ հայերէն են և կամ սպարսկերէնից, ասորերէնից և յունարէնից փոխառութիւններ. մի մասն էլ մեր մէջ արմատ չէ, այլ ածանցուած բառեր. ուստի չեն կարող Կովկասեաններից մեզ անցած լինել, այլ ընդհակառակը հայերէնից անցած են Կովկասեան լեզուներին, ինչ որ յարմարում էլ է պատմութեան, ի նկատի ունենալով հայերէնի անհամեմատ աւելի բարձր քաղաքակրթութիւնը վրացիներից և ուրիշ կովկասեան վայրենի ցեղերից: Մնացեալ հասարակաց ձևերից նրանք որ մեր մէջ մեկնութիւն չունենալով հանդերձ, Փոքր-Ասիական կորսուած լեզուներով էլ չպիտի մեկնուեն, պիտի լինին Կովկասեաններից փոխառեալ բառեր: